Քեզ եւտուր անմահութեան.
Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ուրա՛խ լեր, Կո՛յս անբիծ, երկիր շնորհալի,
Որ զհացն կենաց պարգեւեցեր
Հաստատիչ սրտից մարդկան.
Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

Ուրա՛խ լեր, սրբուհի՛, վայելուչ այգի,
Որ զգինին կուսաբողբոջ բխեցեր
Ուրախարար հոգւոց
Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք:

## Ող

Որ սրբազան խրախճանութիւն,
Ցորում Քրիստոս Տէր մեր ճաշակի,
Եւ չարչարանք իւր յիշատակին
Ընորհիւ մաքուր միտք լնանին
Եւ հանդերձեալ փառացն գրաւ մեզ պարգե-
ւի.
Աղաչեմք, շնորհեա՛ մեզ, Տէ՛ր,
Ճաշակել զքաղցրութիւն քո
Եւ ողորմեա՛:

Ո՛վ յիշատակ ըզսքանչելեաց,
Զոր Տէր արար *իւր* երկիւղածաց.
Զի մարդացեալ Բանն Աստուած
Հարբ եւ Ոգւով ի քեզ սքօղի իրակապէս
Եւ քեւ ի մեզ օթագայ*ի* ճշմարտապէս.
Աղաչեմք, շնորհեա՛ մեզ, Տէ՛ր,
Ճաշակել զքաղցրութիւն քո
Եւ ողորմեա՛:

Ո՛վ հրաշագործ հաղորդութիւն
Միով հացիւ բազմաց միութիւն,
Զմեզ միացո՛ անքակ սիրոյ,
Զի անմաքուր սէր աշխարհիս
Մի՛ մեկնեսցէ զՏէր մեզ ի սիրոյ քումմէ.
Աղաչեմք, շնորհեա՛ մեզ Տէ՛ր,
Ճաշակել զքաղցրութիւն քո
Եւ ողորմեա՛:

***

Օրհնեմք զքեզ, Հա՛յրըդ մարդասէր,
Որ տիրաբար Որդւոյն հարսանիս,
Ուրախանալ զմեզ հրաւիրես անմահ կերակ-
րօք.
Վասն որոյ զքեզ փառաւորեմք հոգեւոր եր-
գով:

Գովեմք զքեզ, Քրիստո՛ս Հօր իմաստութիւն,
Որ շինեցեր տուն զեկեղեցի
Կանգնեալ ի սմա զսեղան սրբութեան յան-
ցանաց մերոց
Վասն որոյ զքեզ բարեբանեմք:

Զքեզ, բարեբա՛ր Ոգի,
Որ զհաւատոյ զխորհուրդն ահաւոր
Ցարենէ կուսին հրաշակերտեցեր
Եւ նմին զմեզ հաղորդս արարեր.
Վասն որոյ զքեզ փառաւորեմք հոգեւոր եր-
գով:

Օրհնեցէ՛ք զԱստուած ի սրբութեան նորա
Զերրորդութիւն եւ միութիւն քաղցրաբարբառ
երգով,
Ամենա՛յն հոգիք, ի ձայն զօրութեան
Եւ հրաշագործողին տո՛ւք ըզփառըս ի բար-
ձունս:

***

Ծառ կենաց ի մէջ եկեղեցւոյ
Ծաւտ գերազանց քան զդրախտին.
Անմահարար եւ կենսատու շնորհին պահ-
պանօղ
Տո՛ւր մեզ զօրութիւն ընդդէմ թշնամոյն:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 *Ս. վրդ. Ամատունի*, Հին ու նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911:
2 Տե՛ս «Հասկ» եւ «Սիոն» 1951 թ.:
3 Այս ձեռագիրն անյայտ էր հայագիտութեանը. տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1948. *Ն. Ակինեան*, Ցուցակ հայերէն ձեռագրաց Լվովի եւ Ստանիսլաւովի, այնուհետեւ՝ *Ն. Ակինեան*, Ցուցակ հայերէն ձեռագրաց Լվովի համալսարանի... եւ Ստանիսլաւովի, Վիեննա, 1961, էջ 597 եւ յաջորդները:
4 Գրիգոր Անաւարզեցու շարականների ցուցակը տե՛ս *Ղ. Ալիշան*, Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, էջ 212:
5 *Մ. Օրմանեան*, Ազգապատում, մասն Բ, Բէյրութ, 1960, էջ 1752:
6 «Գարուն», 1993. *Ա. Մաղոյեան*, Սուրբ Բէնէդիկտոսը հայ մատենագրութեան մէջ, էջ 90:
7 Նշում ենք՝ ըստ մեր տեսած աղբիւրի, եւ ոչ՝ ըստ սկզբնաղբիւրի:



# ՀԱՅ ՈՒԽՏԱՒՈՐՆԵՐԸ ԵՒ ՄԻՋԵՐԿՐԾՈՎԵԱՆ ԾՈՎԱՀԷՆՈՒԹԻՒՆԸ ԺԷ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

*Հայ ուխտագնացութեան պատմու-
թեան շատ էջեր ցարդ մնում են չհրա-
տարակուած եւ չուսումնասիրուած: Մեծ
քանակութեամբ փաստաթղթային ժառան-
գութիւն է կուտակուած աշխարհի շատ
դիւաններում: Նրանց հրատարակութիւնն
ու ուսումնասիրումը թոյլ է տալիս բա-
ցայայտելու հայ ուխտագնացութեան ի-
րաւական ու քաղաքական կարգավիճակը
Մերձաւոր ու Միջին Արեւելքում ԺԷ դա-
րի վերջին[1]: Խմբակային կամ անհատա-
կան ուխտագնացութիւնները, անկախ
նրանից, թէ կատարւում էին ծովային
կամ ցամաքային ճանապարհներով, հա-
ւասարապէս ենթակայ էին բազում
վտանգների: ԺԷ դարի աղբիւրներում
քիչ չեն վկայութիւնները ուխտագնացնե-
րի սպանութիւնների, թալանման եւ այլ
արտակարգ դէպքերի մասին[2]: ԺԷ դարի
կէսերից հիմնականում եւրոպացի ծովա-
հէնների պատճառով երկար ժամանակով
փակ էր համարւում Կ. Պոլիս-Երուսաղէմ
միջերկրծովեան երթուղին: Երեմիա Քեօ-
միւրճեանը դարի կէսին կատարած գրա-
ռումներում վկայում էր. «Ցանէ յանէ
փռանկին, որ ի Ծովն Սպիտակ՝ զբազում ամ ոչ
երթայր ուխտաւորաց նաւ»[3]. այդ էր ուխ-
տագնացների կողմից ցամաքային (հիմ-
նականում՝ Դամասկոսի ճանապարհով)
ուղու օգտագործման պատճառը:
ԺԷ դարի վերջին քառորդում աղ-
բիւրները նորից վկայում են հայ ուխ-
տագնացների կողմից ծովային ճանա-
պարհի օգտագործման մասին: Սակայն,
ըստ մեր ունեցած փաստերի, կարելի է ա-
սել, որ այդ բոլոր փորձերը ձախողուեցին
Էգէյեան ծովում ու շրջակայ ծովածոցե-
րում նաւարկող կորսարների[4] (հայկական
աղբիւրներում «ղուրսանք», «գուրսանք» ձե-
ւով) եւ ծովահէնների պատճառով: Այս-
պէս, 1695 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի եւ
«ի նորին շրջակա[յ] գաւառացն՝ յԷդրէ-
նէու, Թաքիրտաղու, Մալղարայու եւ Կէ-
լիպօլու», Անտոն Չէլէպու շինել տուած
նաւով հայ ուխտաւորների Երուսաղէմ
ուղեւորուող մի մեծ խումբ, «Սուսամ
յորջորջեալ պօղազ»-ում յանկարծակի
յարձակման են ենթարկւում ծովահէննե-
րի կողմից, քշւում մօտակայ կղզիները ու
թալանւում: Էգէյեանի կղզիները նե-
տուած կիսամեռ ուխտաւորները մի կերպ
ապաստանում են Զմիւռնիայում[5]: Մէկ
այլ փաստաթղթում տեղեկութիւնները ա-
ւելի են ճշգրտւում. «Ղուրսան անիծեալ
Դրփուլի՝ ի նաւն որ Ճերուզալէմ գոլով
ընդ ձեռամբ Ալիկոռնա կրանտուգային».
կամ՝ «...Ալիկօռնէզ ճէրուզալէմ ղապու-
տան Տրփոլն է կողոպտեալ»: Լիւոռնացի
ծովահէնի զոհն են դարձել մօտ 200 հայ
ուխտաւորների («Կոստանդնուպօլսու, ...
յԱնդրիայու, Թէքիրտաղու, Իզմիրու, Կա-
ֆայու եւ այլ բազում շրջակայ գիւղօ-
րէից») հերթական խումբը[6]: Ամենեւին
պատահական չէ Երուսաղէմի Ս. Յակոբի
վանքի միաբանների շահագրգռուածու-
թիւնը ուխտագնացութեան ուղիների ու
ծովային ճանապարհների անվտանգու-
թեան ապահովման գործում: Պարտքերի
տակ թաղուած վանքը, որն ուխտաւորնե-
րից զգալի եկամուտներ էր ակնկալում,
չէր կարող անտարբեր մնալ: Մեր կարծի-
քով, նաեւ այդ է պատճառը, որ մեզ հա-
սած փաստաթղթերի մեծ մասը գրուած է
առաջին հերթին երուսաղէմեան միաբան-
ների կողմից:
Վերջերս՝ 1994 թ., ապա՝ 1996 թ.,*

© National Library of Armenia

Վատիկանի «Archivio segreto Vaticano»-ի
եւ Հռոմի Հաւատասփիւռ ժողովի (Propa-
ganda Fide) պատմական դիւաններում
մեր աշխատանքների ժամանակ ի թիւս
այլ փաստաթղթերի մեր ուշադրութիւնը
գրաւեցին միմեանց լրացնող մի շարք
փաստաթղթեր, որոնք վկայում են Պոլսից
եւս մէկ խմբակային ուխտագնացութեան
մասին՝ կատարուած 1685 թուին՝ նախոր-
դից 10 տարի առաջ: Այն եւս ենթար-
կուել էր կորսարների աւազակային յար-
ձակմանը: Այս անգամ Երուսաղէմի Ս.
Յակոբի վանքի առաջնորդական փոխա-
նորդ Յովհաննէս արքեպիսկոպոսի դի-
մումներն ուղղուած են Ինոկենտիոս ԺԱ
պապին (1676-1689), կարդինալ Ջիպոյին
(1679-1695 թթ.՝ պետական քարտուղար
եւ միաժամանակ Հաւատասփիւռ ժողովի
քարտուղար-կարդինալ), Հաւատասփիւռ
ժողովին եւ Հաւատասփիւռի կարդինալ-
ներին: Ուշագրաւ է, որ երուսաղէմեան
միաբանը զանազան եւրոպական ազգու-
թիւնների պատկանող կորսարների գործո-
ղութիւններում շեշտում է նրանց կազմա-
կերպուած բնոյթը («սոքա ամենեքեան միա-
բան օրթախք էին»):

Ստորեւ հրատարակում ենք նրա ձեռ-
քով գրուած չորս փաստաթուղթ, որոնք,
ուղղուած լինելով պապական իշխանու-
թիւններին, միաժամանակ լրացնում են
իրար եւ օգնում ամբողջական պատկերա-
ցում ունենալ դէպքերի ընթացքի մասին:
Պահպանում ենք գրութիւնների լեզուն,
ոճը, ուղղագրութիւնը, կատարելով միայն
կէտադրական ուղղումներ, մեր յաւելում-
ները գրուած են [...] փակագծերով:

I [Ինոկենտիոս ԺԱ պապին][7]

Փոխանորդ Յիսուսի եւ գլխաւոր առա-
քելոցն

Գլուխ Եկեղեցւոյ, երանելագոյն հայր
սրբազան համայնից քրիստոնէից, որք ընդ
ոլորտս տիեզերաց: Բարձրագահի իշխեցո-
ղութեան քո խոնարհական դիմօք ժամա-
նեսցի երկրպագութիւն քրիստոսակիր ան-
ձինդ եւ համբոյր գարշապարի քո սուրբ:
Եւ ծանուցանեմ զորպիսութիւն կրից մե-
րոց, զոր կրեցաք յայսմ ամի ի վերայ ծո-
վուն, ի ձեռաց ղաբիտան Մուշօ[8] Ֆուռօ-
նային, որ հանդիպեցաւ մեզ ի մէջ ծո-
վուն ի Փիսգօթ[9] կղզին, որ դիմեալ գա-
յաք ի Կոստանդնուպօլսէ ԲԾ (200) եւ Ժ
(10) ժողովրդեամբ՝ եպիսկոպոսօք եւ քա-
հանայիւք, արամբք եւ կանամբք, ծերօք
եւ տղայիւք[10] ի սուրբ յԵրուսաղէմ. զոր
ես տառապեալս երաշխաւոր եղէ նոցա,
թէ ունիմ ընդ իս փաթենթա[11] ի կարտի-
նար[12] Ջիպօէն եւ գիր ըՍտամպօլու պա-
լիօզէն[13] եւ ես գնացեալ եմ ի Հռոմ՝ առ
երանեցեալ հայրն սրբազան եւ առեալ եմ
ի նմանէ աւրհնութիւն եւ շնորհս եւ յու-
ծենցա[14] վասն թողութեան մեղաց: Եւ թէ
ոք պատահեսցի մեզ ի վերայ ծովուն
ղուրսանը[15], ցոյց կու տամ նոցա զմատա-
լիայք[16] սրբազան հօրն որ ետ ինձ եւ ա-
փօստօլ արար զանարժանս ոտնալուացու-
թեամբ[17]: Նոքա ի տեսանելն զմատալիայ-
քն ոչ կարեն մեզ դէմ կալ, այլ աներկիւղ
աւրհնութեամբ կու անցանիմք եւ
գնամք, զոր հաւանեալ ժողովուրդք Հա-
յոց ապաւինեցան ի յԱստուած եւ ի յա-
ղօթս հօրդ երանեցելոյ եւ մտաք ի նաւ
սեպտեմբերի Ի [20]: Եւ հասաք հոկտեմ-
բերի Թ (9), որ էր թիւ տարոյն մեր ՌՃ-
ԼԵ [1685], ի Փիսգօթ կղզին, յանկարծա-
կի դէպ եղեւ մեզ վերոյ գրեալ անօրէն
ղաբիթանն Մուշօ Ֆուրօնիան, որ էր ազ-
գաւ ֆրանցէս, նաւն Պէնէմիա անուն,
քաղաքաւ Թուլունա, սանճաղն Մալթա՝
նաւն ֆրանցէս թագաւորին. զոր ընբռ-
նեալ զնաւն մեր, տարեալ ի Ստամփա-
լիա[18] կղզին եւ ունէր ընդ ինքն Բ [2]
ֆրիաթա[19]՝ Ա [1] մեծ եւ Ա [1] փոքր:
Եւ յետոյ տարեալ ի Նէօ[20] կղզին՝ անդ
մերկացոյց զմեզ եւ արար մերկ ի մօրէ:
Եւ ես ցոյց տվեալ նմա զփաթենթա կար-
դինար Ջիպօին եւ զգիր Ստամպօլու պա-
լիօզին, որ ունէի ընդ իս, զոր առեալ ի
ձեռաց իմոց՝ էարկ առաջի շանն եւ զգիր
պալիզօին, կտոր կտոր մանրեալ ձգեաց ի
ծովն՝ ասելով թէ՝ ես այսօր զիմ գիտածս
կու առնեմ եւ կու թալանեմ, վաղն միւսն
դուք գնացէք առ փափն Հռօմա[յ] ի գա-
նկատ. եւ Բ [2] մատալիան՝ Ա (1) ոսկի
եւ Ա [1] արծաթ, որ շնորհեցեր ինձ զա-
նարժանիս եւ մատանիս էլմաս քարով, որ
էր գինն Ծ եւ Կ (960) ղուռուշ եւ ի Դ [4]
ղուռուշ ոսկի մատանի մի այլ եւ ԳԾ
[300] եալտըզ ոսկի, զոր ունէի ընդ իս եւ
զսուրբ նշանս ոսկի եւ ըզգաւազանս ե-
պիսկոպոսական զգեստովս, որ ընդ ամէ-
նն: Ինձ միայն ՌԳԾ [1300] ղուռուշի ապ-
րանք էառ եւ զիս ինքն իւրով ձեռամբն
մերկացոյց եւ պահեաց զիս Լ [30] օր առ
ինքն ի նաւն՝ ոչ թողլով գնալ առ ուխ-
տաւորսն իմ, զոր ունէր կալեալ ընդ ձե-
ռամբ իւրով, մինչեւ զիւր պիղծ կամքն
կատարեաց, ապա թէ արձակեաց զմեզ:
Եւ մեք Ե (5) ամիս երբրուն մնացաք ի
վերայ ծովուն, մինչեւ Աստուած ողորմե-
ցաւ աղօթիւք սուրբ հօրդ եւ եհան զմեզ
ի սուրբ յԵրուսաղէմ մարտի Ժ [10] բո-
կոտամբ եւ մերկ անձամբ, արտասուաթոր
աչօք, եւ բեկեալ սրտիւ կատարեցաք
զպասէք Յարութեան Տեառն: Եւ կամէի
ես ինքնին գալ եւ բողոքել առ հայրդ
սրբազան, թէ ի ժամանակի քում այսպէս
պատահեաց մեզ: Ոչ կարացի գալ, զի Ո-
հաննէս արհի եպիսկոպոսն սուրբ Երու-
սաղէմայ վերակացու եւ փոխանորդ ա-
րար զտառապեալս՝ Սուրբ Յակոբայ վա-
նացն, որդոյն Զեբեթեա, որ ի սուրբ յԵ-
րուսաղէմ, վասն այն ոչ կարացի գալ:
Այլ փոխան իմ եւ փոխան տառապեալ
ազգիս, խորհուրդ արարեալ, առաքեցաք
առ հայրդ սրբազան զհոգեւոր եղբայրն
մեր եւ զաշխատաւոր սրբոյ տանս զՆղիա
եպիսկոպոս, զառաջնորդ սուրբ Ծնն-
դեանն Քրիստոսի, որ ի Բեթլահէմ եւ
զփաթենթայքն ընդ նմին առաքեցաք, առ
ի յաղաչանս երանեցեալ սուրբ հօրդ, զի
լուիցես աղաչանաց մերոց եւ կատարես-
ցես զհայցուածս մեր եւ տացես մեզ գիր
ի սուրբ հօրէդ վասն զգուշութեան ա-
րանցն ղուրսանաց, որք շրջին ի վերայ
ծովու. զի մի այլ եւս իշխեսցեն առնել
ընդ ազգիս մեր զայն գործ եւ վրէժխն-
դիր լիցիս վերոյ գրեալ ղաբութան Մուշօ
Ֆոռօնային. զի մեք եւ ազգս Հայոց ի
սուրբ հայրդ երանեցեալ ապաւինեալ
պարծիմք: Եւ եւս ես տառապեալ Ովանէս
եպիսկոպոսս առաւել պարծիմ ի մէջ սո-
ցայ, բայց զայն ցաւիմ, որ եղէ ծաղր եւ
նախատինք ի մէջ ազգիս, թէ այդ է քո
պարծիլդ եւ երաշխաւոր լինիլդ մեզ, որ
ազգ ֆռանկաց զիւրանց առաջնորդին
զգիրն ոչինչ համարեցան եւ զմեզ մեր-
կացուցին. այլ եւ հալիմ եւ մաշիմ, Բ (2)
մատալիային, զոր էառ ինձանէ, ապա այլ
որով պարծիմ:

Խնդրեմ ի սուրբ հօրէդ, զի կրկին
տացես ինձ եւ հոգեւոր եղբօրս իմոյ Ե-
ղիա եպիսկոպոսին մատալիայք, զի աւրհ-
նութիւն սուրբ հօրդ ի մէնջ անպակաս
լիցի: Բայց զիմ մատանին եւ զԲ [2] մա-
տալիայն եւ զսուրբ նշանս կու խնդրեմ ի
սուրբ հօրէդ եւ ի Սուրբ ժողովոյն, որ
անմխիթար չի մնամ, եւ յուծենցայ սուրբ
հօրդ յինէն անպակաս լիցի:

Ո՛ղջ լեր, հա՛յր սրբազան:

Ես Յովհաննէս եպիսկոպոս ձեռամբ
իմով գրեցի, որ եմ աթոռակալ եւ փոխա-
նորդ սուրբ յԵրուսաղէմայ արհի եպիսկո-
պոսին:

[Փոքր կնիք՝] Քրիստոսի ծառայ Յով-
հաննէս վարդապետ:



© National Library of Armenia

## II [Կարդինալ Չիպոյին][21]

Մեծի եւ երջանկաշնորհի, երանազարդ եւ գերապատիւ տեառնդ կարդինար Ցիպօի ձօնեսցի ողջոյն յիսուսաւանդ վեհիդ պաղապանձի:

Բացատ միջոցաւ իբր առընթեր սիրով, հուպ ընդ հուպ ողջունիւ, ծանուցանեմ զորպիսութենէ իմմէ յաւէտ բաղձալւոյդ, զոր կրեցաք յայսմ ամի, ի վերայ ծովուն, որ էր թիւ մեր ՌՃԼԵ [1685], զի նեղութիւն եւ վիշտք պատեցին զմեզ, զի ես՝ տառապեալս, երաշխաւոր եղէ ուխտաւորաց մերոց, որ ի Կոստանդնուպօլիս ԲՃ [200] եւ Ժ [10] ժողովրդոց քրիստոնէից՝ եպիսկոպոսօք եւ վարդապետօք եւ քահանայիւք: Թէ գնամք աւրհնութեամբ անահ եւ աներկիւղ ի սուրբ յԵրուսաղէմ, զի ունիմ ընդ իս զշնորհս եւ զաւրհնութիւնս երանեցեալ հօրն սրբազանի, զոր ետ ինձ Բ [2] մատալիա՝ Ա [1] ոսկի եւ Ա [1] արծաթ եւ փաթ[ե]նթա՝ կարդինար Ցիպօին ընդ իս եւ գիր ըՍտամպօլու պալիօզէն: Եւ ով ոք որ հանդիպեցի մեզ ի մէջ ծովուն, եթէ ղուրսանք, եթէ այլ ոք ցոյց կու տամ նոցա զմատալեայքն եւ զփաթենթայն կարդինարին եւ նոքա տեսեալ ոչինչ կարեն առնել մեզ: Այլ մեծաւ պատուով զմեզ կու յողարկեն, զոր հաւանեալ ուխտաւորացն մերոց ընդ բանս եւ տեսին զմատալեայքն եւ զփաթենթայն, զոր ունէի՝ ապաւինեցան յԱստուած եւ ի գիրս ձեր: Եւ մտաք ի նաւ, թէ կու գնամք աներկիւղ ի սեպտեմբերի Ի [20] եւ հասաք հոկտեմբերի Թ [9] ի Փիսգօթ կղզին, դէպ եղեւ մեզ մեծ ղալիօն[22] մի, անունն Պէնէմիա եւ ղաբիտանի անունն Մուշօ Ֆօռօնիա, ազգաւ ֆրանցէս, քաղաքաւ Թուլունիա, սանճաղն Մալթա: Ըմբռնեալ զմեզ եւ զնաւս մեր, զի ունէր ընդ ինքեան Բ [2] ֆրիաթա՝ Ա [1] մեծ եւ Ա [1] փոքր եւ տարեալ զմեզ Ստամփալիա կղզին եւ Բ [2] օր անդ մնացաք: Զկնի Բ [2] աւուր, տարեալ զմեզ ի Նէօ կղզին, անդ ցոյց ետու նմա զփաթենթայն քո: Եւ զԲ [2] մատալեայն եւ զգիր ըՍտամպօլու պալիօզին եւ զիմս ուղղափառութիւնս, զոր նա առեալ զփաթենթայ քո էարկ առաջի շանն եւ զգիր պալիօզին՝ մանրեալ, կտոր կտոր արար եւ ձգեաց ի ծովն՝ ասելով թէ՝ ես այսօր զձեզ կու թալանեմ, վաղն դուք գնացեք առ փափն ի գանգատ: Զոր արար զամենեսեանն մերկ ի մօրէ, որ եւ զիս զանարժան Ովաննէս եպիսկոպոս ծառայ սրբազան հօրն երանեցելոյ, անօրէն Մուշօ Ֆուռօնիան ինքնին ձեռամբ իւրով մերկացոյց եւ էառ յինէն զԲ [2] մատալիան: Եւ զսուրբ նշանս ոսկի եւ զմատանիս էլմաս քարով, որ էր գին մատանոյն ՃԿ [160] ղուռուշ եւ ԳՃ [300] եալտուզ ոսկի եւ մատանի մի այլ ոսկի ԻԴ [24] ղուռուշի եւ զաւազանս եպիսկոպոսական զգեստովս, որ ընդ ամէնն ինձ միայն ՌԳՃ [1300] ղուռուշի ապրանք էառ: Բայց զայս զարմանամ, զի թէ թշնամոյն նախատեալ էր, համբերէի արդեօք, իսկ սա հաւասար իմ, ի հաւատս ուղղափառութեանս եւ ծանօթ իմ օփօստօլութեան՝ զոր արարիք զանարժանս, յորժամ եկի յայդր յերկրպագութիւն սուրբ հօրն երանեցելոյ եւ ետ ինձ զմատալիայքն եւ զլուծենցայն, որ նովաւ պարծէի ի մէջ ազգիս իմոյ: Այժմ այս անօրէնն էառ զամենայն եւ արար զիս ծաղր եւ նախատինք ի մէջ ազգաց Հայոց, զոր ամենայն օր կու մեռանիմ ի տրտմութենէս եւ իմ պարծիլս եւ կաթուլիկէ լինիլս ուր մնաց, կամ որով պարծիմ, կամ որով սոցա խրատիչ լինիմ, կամ զինչ քարոզեմ ազգիս, որ կասեն դէմ յանդիման, թէ Ֆռանկաց ղաբիթանն զիւր մեծաւորի փաթենթայն առաջի շանն ձգեաց, սոցա որպէս հաւատ կա[յ], կամ ահ եւ երկիւղ եւ այսմ բանէս լինիմ ես ափիբերան եւ ոչ կարեմ



խօսել եւ ոչ ինչ: Վասնորոյն աղաչեմ, զի լիցիս վրէժխնդիր ուղղափառ հաւատոյս մերոյ եւ պատժել տացես զվերոյ գրեալ ղաբիտանն ի Սուրբ ժողովոյն եւ ի սուրբ հօրէն, զի լիցի խրատ այլոց, զի լուիցեն այլքն եւ երկիցեն: Եւ ոչ եւս յաւել առնել այդպիսի գործ ընդ ազգիս մերոյ, զի Լ [30] օր արգելեաց զիս առ ինքն ի նաւն իւր՝ չթողլով զիս գնալ ի մէջ ուխտաւորաց մեր, մինչ զիւր պիղծ կամքն կատարեաց: Ապա թէ արձակեաց զմեզ, եւ մեք տատանեալ մնացաք ի վերա ծովուն Ե [5] ամիս, մինչեւ Աստուած ողորմեցաւ եւ եհան զմեզ ի սուրբ յԵրուսաղէմ մարտի ԵԺ բոկոտամբ եւ մերկ անձամբ, արտասուաթոր աչօք եւ բեկեալ սրտիւ կատարեցաք զպասեք Ցարութեան Տեառն: Եւ զկնի պասեքիս խորհուրդ արարեալ ճար հնարեցաք, թէ մնալ մեզ անտէրուչ չի լինիլ, զի կամէի ես ինքնին գալ եւ բողոքել առ քեզ եւ առ Սուրբ ժողովն եւ առ երանեցեալ սուրբ հայրն եւ ոչ կարացի. զի սուրբ յԵրուսաղէմայ առաջնորդն Հայոց Ովաննէս արհի եպիսկոպոսն կացոյց զիս վերակացու եւ աթոռակալ սուրբ Ցակոբայ որդոյն Զեբեդեա, փոխան իւր: Հարկ եղեւ ինձ առաքել իմս փոխան զհոգեւոր եղբայրն իմ զԵղիա եպիսկոպոսս զաշխատաւոր սրբոյ տանս եւ զառաջնորդ սուրբ Ծննդեանն Քրիստոսի, որ ի Բեթլահէմ, բողոքել զվիշտս մեր եւ զնեղութիւն ազգիս մերոյ, զոր կրեցաք ի վերոյ գրեալ ղաբիտանէն. զի դու լիցիս վրէժխնդիր ուղղափառութեանս իմոյ եւ այլ ազգիս: Եւ ահա զփաթենթայն քո եւ այլ թղթեր առաքեցի առ անձկալի վեհդ, զի ըստ քում իմաստութեանդ որպէս վայել է այնպէս արասցես, առցես գիր ի երանեցեալ սուրբ հօրէն եւ ի Սուրբ ժողովէն սաստի եւ զգուշութեան ի վերայ ղուրսանացն եւ տացես Եղիա եպիսկոպոսիս մերոյ, զի փութով բերեալ հասուսցէ առ մեզ: Այլեւ զԲ [2] մատալիայս եւ զէլմաս մատանիս եւ զսուրբ նշանս եւ զլուծենցա սուրբ հօրն ի քէն խնդրեմ, որ առեալ առաքեսցես ինձ, զի մի մեռայց անմխիթար, եւ կարօտ ի յօրհնութենէ սրբոյ հօրն երանեցելոյ: Ո՛ղջ կացցես, հա՛յր հոգեւոր, մշտայաւետ խնդութեամբ, ի սերն Աստուծոյ Հոգւոյն:

Գրեցաւ ի սուրբ յԵրուսաղէմ, առ դամբարանի սրբոյն Ցակոբայ, թվ. ՌՃԼԶ [1686], մայիս ԺԱ [11]:

Ես Ցովհաննէս եպիսկոպոս ձե[ռ]ամբ իմով գրեցի, որ եմ աթոռակալ սուրբ յԵրուսաղէմայ արհի եպիսկոպոսի Ովանէսի:

[Փոքր կնիք՝] Քրիստոսի ծառայ Ցովհաննէս վարդապետ:

## III [Հաւատասփիւռ ժողովի կարդինալներին][23]

Աստուածահաճոյից եւ երիցս երանելեաց հարց սրբոց եւ հովուաց ընտրելոց, ըստ նմանութեան առաքելոցն զառ ի յԱստուծոյ պատուեալք եւ բազմադիմի շնորհիւ նորին ուռճացեալք, բանիւք գեղապանծ եւ արդեամբք անբաղդատելիք, քրիստոսական կրօնիւքն պատուեալք եւ հաւատով նորին պայծառացեալք, մտերիմ ծառայք Աստուծոյ, արդար դատաւորք, որ դատէք զամենայն մարդիկ իրաւամբք եւ արդարութեամբք, որք ի նաւու հաւատոյ ընդ ծովք աշխարհիս: Հողմով Հոգւոյն Սրբոյ ուղղակի ճշմարտութեամբ եւ արդար իրաւամբք եւ դատաստանաւ, անվնաս յանքոյթ եւ առանց ալեաց հասուցանէք ի նաւահանգիստն, որ եւ բարի գործօք ձերովք փառաւորի Հայր ձեր, որ յերկինս է:

Ո՛վ Սուրբ ժողովք, որք էք դատաւորք կարգեալք ի Հոգւոյն Սրբոյ՝ ըստ առատածաւալ տուչութեան նորին, դաստիարակ հօտոց բանականաց: Ողջոյն սիրոյ եւ խաղաղութեան մատուցանեմք, որ ի սուրբ քաղաքէս Երուսաղեմէ Հայկա-

© National Library of Armenia

կան սեռից, որ եմք կայացեալ առ դամբարանի սրբոյն Յակոբա[յ] առաքելոցն որդւոյն Զեբեթի, եպիսկոպոսք եւ քահանայք, կրօնաւորք եւ միահամուռ ժողովուրդք: Խոնարհական դիմօք հարկաւորեցաք ծանուցանել զուրախութիւն կրից մերոց մեծի երանեցեալ Հօրն սրբոյ եւ փոխանորդի Քրիստոսի Աստուծոյ եւ առ երկնագումար եւ հոգիախումբ Սուրբ ժողովոյն ձեր, զոր կրեմք ի կողմանս յայսոսիկ արանց ոմանց քրիստոնէից, որք շրջին ի վերայ ծովու: Թէ ո՞րպիսի խայտառականօք անարգեցին զազգս մեր, որք դիմեալ գային յաստուածակոխ եւ ի սուրբ քաղաքս յԵրուսաղէմ, քանզի ամ յամէ ազգն մեր, որք ի հայկական սեռից, ի սեփհական յաշխարհէ իւրեանց, թէ՛ յարեւելից, թէ՛ յարեւմտից ըղձակերտ սիրով եւ յոգնատենչ փափագանօք դիմեալ գան ի սուրբ քաղաքս յԵրուսաղէմ, առ ի յերկրպագութիւն աստուածընկալ սուրբ գերեզմանին Քրիստոսի եւ այլ սուրբ տեղեաց Տնօրինականաց Նորին: Եւ ի գալն նոցին ի վերայ ծովուն բազում վիշտս եւ անտանելի նեղութիւնս հասուցանեն նոցա արքն այնոքիկ, որ ղուրսանք եւ աւազակք անուանին, զոր եւ պատահիլն նոցա առ ժողովուրդն մեր, դիմեն ի վերայ նոցա յանդուգն բախ եւ ըմբռնեն զնոսա՝ զոմանս սպանանեն եւ զոմանս սրախողխող առնեն եւ զայլսն զամենեսեան այր եւ կին մերկացուցանեն ամենայն ընչից եւ ստացուածոց: Զոր անցեալ տարին Բ [2] նաւ յազգէ մեր Գճ [300] ուխտաւորօք եւ այլ աւելեօք, որք դարձեալ ի Պաղեստինոյ ի Փայաս կու գընային, դէպ եղեն նոցա ալիկուռնացոց ղուրյանքն: Ըմբռնեալ զնոսա մերկ ի մօրէ արարին եւ էին ի մէջ ուխտաւորաց մերոց Է [7] եպիսկոպոսք եւ Ե [5] վարդապետք եւ ԺԶ [16] քահանայ: Զոր Բ [2] քահանայ եւ Դ [4] աշխարհական եւ Զ [6] կին սպանին թուանքով եւ այլ բազում եւ զանազան ոճիրս գործեցին ընդ նոսա, զոր գրել ոչ կարեմք, զի ոչ վայելէ անուան քրիստոնէից: Եւ յաւէտ յաճախման գործոյն ականատես եւ ականջալուր եղեն Ըսքանտրունոյ պալիօզն եւ Հալպա ֆռանկ աբեղայքն եւ պալիօզք նոցին եւ սուրբ քաղաքիս եղեալ վանք ֆռանկաց եւ կարգաւորք նորին, զոր եւ ճշմարտութիւն գործոյն ներթղթոջ նոցին են բացայայտ:

Այլ եւ յայսմ ամի ի թուաբերութեան մերում ՌՃԼԵ (1685) սեպտեմբերի Ի [20] ես նուաստ Ովանէս եպիսկոպոս, որ երբեմն եկի ի Հռոմ երկրպագութիւն գլխաւոր առաքելոցն Քրիստոսի՝ Պետրոսի եւ Պօղոսի եւ ի համբոյր երկնաչու սուրբ ոտից մեծի երանեցեալ սուրբ հօրն սրբազանի Ինօնչէցիոսի փափին մետասաներորդի եւ փաթրօն[24] կարդինար Ջիպօին եւ առ Սուրբ ժողովն. յորժամ ափոստոլ արար զանարժանս ոտնալուացութեամբ եւ շնորհեաց ինձ սրբազան հայրն հանուրց, Բ [2] մատալիա՝ Ա [1] ոսկի եւ Ա [1] արծաթ, եւ կարտինար Ջիպօն ետ ինձ մէկ գիր փաթենթա: Այժմ նոյն Ովանէս եպիսկոպոս ծառայ ձեր եւ Սիմէոն եպիսկոպոս եւ Գրիգոր վարդապետս երաշխաւոր եղեալ ժողովրդեանս ուխտաւորաց մերոց, որք ի Կոստանդնուպօլիս, թէ գնամք աւրհնութեամբ ի սուրբ յԵրուսաղէմ՝ անահ եւ աներկիւղ, զի ունիմ ընդ իս թուղթ ի կարտինար Ջիպօէն եւ ըՍտամպօլու պալիօզէն, զոր հաւատացին ուխտաւորքն մեր եւ ապաւինեցան ի յԱստուած եւ ի գիր ձեր եւ մըտայք ի նաւ հանդերձ եպիսկոպոսօք եւ քահանայիւք եւ Բճ [200] եւ Ժ [10] ոգով քրիստոնէիւք, ընդ այր եւ ընդ կին եւ հասաք ի Փիսգօթ կղզին: Հոկտեմբերի Թ [9] դէպ եղեւ մեզ ղալիօն մի մեծ, որոյ անուն նաւին Պէնէմիա ասի եւ անուն



ղաբիտանին Մուշօ Ֆուռօնիայ՝ ազգաւ ֆրանցէս, քաղաքաւ Թուլունիայ, սանճաղն Մալթա, նաւն ֆրանցէս թագաւորին, եւ Բ [2] ֆրիաթա ընդ նմա, մինն մեծ եւ մինն փոքր: Մեծ ֆրիաթային ղաբիտանի անունն Ճուան Սումէրի, ինքն մալթէզ, սանճաղն Փօլօնիայ: Այս ֆրիաթայիս տէրն ղաբիտան Պիանգօնէ: Փոքր ֆրիաթան, որ փրկանթին[25] ասի՝ այլվի սոցա է, սորա ղաբիտանի անունն Ճագի ասի, ինքն ֆրանցէս, սանճաղն Փօլօնիա, միւս փրկանթին՝ ղափիտան Եագմօ, քաղաքաւ Ճագի Թօլի, սանճաղն Վէնէտիկու: Այս Եագմօի ֆրիաթան մանէթային եւ Ստեֆանինէ: Սոքա ամենեքեան միաբան օրթախք[26] էին: Նախ առեալ տարան զմեզ Ստամփալիա կղզին: Անդ գտին զԳ (3) ղալիօնն, որք են այսոքիկ. ղափիտան Ռանճի, ինքն ֆրանցէս, սանճաղն Փուրթօգալ, ղաբիտան Դանիէլ՝ սանճաղն Մալթա, ղաբիտան Մարին՝ սանճաղն Փուրթօգալ: Յետոյ տարին Սան Թուրինէ[27] կղզին, Բ (2) գիշեր անդ պահեցին զմեզ: Յետոյ տարեալ Նէօ կղզին՝ անդ մերկացուցին, իսկ Գ (3) ղալիօնքն, որք յառաջագոյն Ստամփալիա կղզին տեսին, ի ժամ մերկացման մերոյ ի Նէօ կղզին եկեալք էին եւ անդ պատրաստի կային. զի զուխտաւորքն մերկացուցանօղն ղաբիտան Մուշօ Ֆռօնեօնն էր եւ օրթաղ նորին ղաբիտան Պիանգօ, սանճաղն Փուրթօգալ: Յետ երից աւուրց եկեալ Ճէրուսալէմի ղաբիտանն Ֆրանչիսգօ Պարպէրա՝ սանճաղն Ալիկուռնայու: Սորա հետն եկեալ ղաբիտան Սիմօն, ինքն ֆրանցէս, ղալիօնին Սանթանա ասի, սանճաղն Ալիկուռնա: Միւս ղալիօն եկեալ ղաբուտան Պուսէօին՝ ինքն ի մէջն չէր նաւին, այլ ղաբիտան Նօռա կասեն, ինքն ֆրանցիս, սանճաղն Փուրթօգալ: Միւս ղալիօն եկեալ, գավալէր Ռօմօն՝ Ա (1) Մարա շայխա մի առեալ, հետն բերեալ. սորա սանճաղն Բօրդուգալ: Միւս բուլաքա մի պազըրկանաց[28], նաւն ֆրանցիսու թագաւորին, սանճաղն Ֆրանցիսու, ղաբիտանի անունն Մարին: Այս նաւիս մէջն Ա (1) ծերագոյն մարդ մի կայր, անունն Մուսօ Թուլունիայ: Այս ի Նիեօ կղզին ի կարգ աշխարհի մտեալ կին առեալ էր՝ Մուսօ Պրավօ ասի: Ա (1) մարդ այլ Ստամաթագի Աթինալի փրօթօսինճիլօ[29] կարգաւոր եղեալ եւ Ա (1) ֆրանկաց աբեղա մի այլ, անուն փաթրի վիգարեօ[30] Տինիեօ, Փառան կղզին Վէնէտիկ գօնսուլին[31] անդ եղեալ է, անունն Անտօնագի Սփիրիտեօ: Բայց զմեզ մերկացուցանօղն ղաբիտան Մուշօ Ֆուռօնիօնն էր, զոր ի վերոյ գրեցաք: Նմա ցոյց տվաք զկարդինար Ջիպօին փաթենթային, զոր նա առեալ առաջի շանն էարկ զթուղթն եւ զգիր ըՍտամպօլու պալիօզին մանրեալ կտոր կտոր արար՝ ասելով թէ՝ ես այսօր զձեզ կութալանեմ եւ մերկացնեմ, վաղն գնացէք դուք առ փափն գանգատ: Մինչ զի անօրէն թայֆայքն[32] իւր ձեռքն ձգեալ ի կանայս ուխտաւորացն զամօթիք նոցա խառնեալ, թէ դրամ ունիք պահեալ: Զոր անաստուած բարբարոսքն զայս գործ ոչ գործեն, զոր նոքա արարին եւ ի նուաստ Ովանէս եպիսկոպոսէս առին զԲ (2) մատալիայն, զոր վերոյ գրեցաւ եւ զսուրբ նշանն ոսկի, զոր ունէի առ իս եւ զոսկի մատանիս էլմաս քարով, որ Ճ եւ Կ ղուռուշ էր գինն, եւ ոսկի մատանի մի այլ ԻԴ ղուռուշի եւ զգաւազանս եպիսկոպոսական զգեստովն եւ զսահաթն, զոր ի Հռոմ գնեցի ձեռամբ վեհին Բարսեղ վարդապետին եւ կայր գիր ի ներքոյ կոյս, թէ ի Փարէզ քաղաք շինեցաւ եւ անուն շինօղին Լուկա: Ընդ ամէնն ինձանէ միայն ՌԳՃ (1300) ղուռուշի ապրանք էառ, թող զմնացեալ ուխտաւորաց ապրանքն եւ զինչքն, զոր նոքա այլ զինչս իւրեանց տէֆտէր արարին[33] եւ զնեղութիւնս, զոր

© National Library of Armenia

կրեցին, զամէնն գրեալ առ սրբութեան մեծի ժողովոյն ձերոյ մատուցին, զի ԼԳ (33) օր արգիլեցին զմեզ առ ինքեանս, որ ի հացէ կարօտ եւ ի ջրէ ծարաւ մնացաք, ապա թէ ողորմեալ արձակեցին զմեզ եւ մեք Ե (5) ամիս տատանեալ մնացաք ի վերայ ծովուն, մինչեւ Աստուած ողորմեցաւ եւ եհան զմեզ ի սուրբ յԵրուսաղէմ մարտի ամսոյ ի Ժ (10) բոկոտամբ եւ մերկ անձամբ, արտասուաթոր աչօք եւ բեկեալ սրտիւ արարաք զպաշտօնս (?) յարութեանն Քրիստոսի եւ խորհուրդ արարաք թէ ճար չունիմք, միայն զԱստուած եւ զսրբազան Հայրապետն՝ զփոխանորդն Քրիստոսի եւ զՍուրբ ժողովն ձեր այց առնել տառապեալ ազգիս, զի վասն այդմ գործոյ յանցեալ ժամանակին կամէր Հայրապետն մեր Եղիազար կաթողիկոսն գալ յայդր, առ սրբազան փափին եւ ոչ եղեւ, զի կամայ ակամայ առեալ տարան ի սուրբ Էջմիածին Հայքն արեւելեան եւ անդ նստուցին յաթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի եւ մնաց գործս այս անկատար[34], վասնորոյ եւ մեք, ծառայք Սուրբ ժողովոյդ, հարկաւոր վարկաք առաքել զԵղիա եպիսկոպոսս՝ զաշխատաւոր սրբոյ տանս, զառաջնորդ սուրբ Ծննդեանն Քրիստոսի, որ ի Բեթլեհէմ, առ ի յերկրպագութիւն մեծի հօրն մերոյ սրբազանի եւ ի համբոյր երկնաչու սուրբ ոտից նորա նա եւ առ հոգիախումբ Սուրբ ժողովն, առ ի բացայայտել զտառապանս եւ զվիշտս մեր եւ զփուշն, զոր միշտ հնձեմք, գրիւ աղաչանաց եւ տէֆտէրիւ եւ ձեռագրիւ ուխտաւորաց մերկացելոց: Առ այս մաղթեմք եւ յերեսս անկեալ ժտեմք եւ հայցեմք առ Սուրբ ժողովդ, որ էք կարդինալք դատաւորք կարգեալք ի հոգւոյն սրբոյ, իրաւամբք եւ արդարութեամբ դատ առնել եւ վրէժխնդիր լինել վերոյգրեալ արանցն, որք ի վերա ծովուն եւ այլ ղուրսանացն, զոր ոչ գիտեմք:

Վասն Աստուծոյ եւ վասն շնորհաց սուրբ քաղաքիս, բարեխօս արկանեմք առաջի Սուրբ ժողովոյդ, զսուրբ Կոյսն Տիրածին եւ զմաղթանք սուրբ առաքելոյս Յակոբայ, զի ողորմեսջիք մեզ եւ իրաւադատ քննութեամբ գթասջիք ի տառապեալքս, ծանուցանել զվիշտս մեր մեծի երանեցեալ հօրն սրբազանի, զի ողորմեսցի ի վերայ մեր եւ շնորհեսցէ մեզ նամակ սաստի եւ զգուշութեան ի վերայ արանցն, որք շրջին յերեսս ծովու, զի մի այլ եւս իշխեսցեն առնել ընդ ազգիս զայն գործ:

Ո՛ղջ լերուք, հա՛յրք սրբազանք եւ վե՛հք պատուականք, պարագայծ ամօք մշտայաւէտ խնդութեամբ ի սէրն Աստուծոյ Հոգւոյն:

[Լուսանցքում՝ թեք՝] Գրեցաւ ներթուղթ Փրկչին ՌՈՁԷ [1687]երորդի եւ մերս հայկական թվի ՌՃԼԵ [1686]երորդի, մայիս ամսոյ մետասանի, պատկեր աւուր Դ [4]շաբթի, առ դրան սուրբ դամբարանի Յակոբայ որդւոյն Զեբեթի, յԵրուսաղէմ սուրբ քաղաքի:

Ես Յովհաննէս եպիսկոպոսս, աթոռակալ սրբոյն Յակոբայ որդւոյն Զէբեթիայ եւ փոխանորդ տեառն Ոհաննէս արհի եպիսկոպոսի սուրբ յԵրուսաղէմայ, ձեռամբ իմով գրեցի:

[մեծ, գեղեցիկ կնիք՝]





IV [Հաւատափիւռ ժողովին][35]

Է

Զառ ի Յիսուսայ պատուեալք եւ բազմադիմի շնորհիւ նորին ուռճացեալք անբանիւք գերապանծ եւ արդեամբք անբաղդատելիք, քրիստոսական կրօնիւքն պայծառացեալք եւ հաւատով նորին պայծառացեալք, մտերիմ ծառայք Աստուծոյ, արդար դատաւորք, որ դատէք զամենայն մարդիկ իրաւամբք եւ արդարութեամբ, որք ի նաւու հաւատոյ ընդ ծով աշխարհիս, հողմով հոգւոյն սրբոյ ուղղակի ճշդութեամբ եւ արդար իրաւամբք եւ ադատաստանաւ, անվնաս յանքոյթ եւ ահանց ալեաց հասուցանէք ի նաւահանգիստն, որ եւ բարի գործօք ձերովք, փառաւորի Հայր ձեր որ յերկինս է:

Ո՛վ Սուրբ ժողովք,

Որ էք դատաւորք կարգեալ ի հոգւոյն սրբոյ, դաստիարակ հոգոց բանակաց: Ողջոյն սիրոյ եւ խաղաղութեան նաց: Ողջոյն սիրոյ եւ խաղաղութեան մատուցանեմ, խոնարհական դիմօք, եւ ծանուցանեմ զվիշտ եւ զնեղութիւնս մեր, զոր յայսմ ամի կրեցաք ի վերայ ծովուն, ի թուականութեան մերում ՌՃԼԵ [1685]: Զի ես տառապեալս Ովանէս եպիսկոպոսս, որ եկի յերկրպագութիւն մեծի երանեցելոյ սուրբ հօրն Ինէնչէցիօս փափին մելոյ սուրբ հօրն Ինէնչէցիօս փափին մետասաներորդի եւ ի ժամանակս կարտինար Ցիպօին, յորժամ արար զտառապեալս ապստոլ ոտնալուացութեամբ եւ շնորհեաց ինձ Բ [2] մատալեան, Ա [1] ոսկի եւ Ա [1] արծաթ եւ լուծենցա զթողութիւն եմեղաց: Այժմ նոյն ինքս, ծառայ սուրբ երանեցեալ հօրն, եւ սուրբ ժողովոյդ, երաշխաւոր եղէ եւ քէֆիլ ուխտաւորաց Կոստանդնուպօլիս ԲԾ Հայոց, որք ի Կոստանդնուպօլիս ԲԾ [200] եւ Ժ [10] մարդոց, եպիսկոպոսաւ եւ քահանայիւք հանդերձ արամբք եւ կանամբք, ծերօք եւ տղայօք: Եթէ գնամք ի սուրբ յԵրուսաղէմ, անահ եւ աներկիւղ, զի ունեմ ընդ իս փաթենթայ ի կարտինար Ցիպօէն եւ Բ [2] մատալիա ի սուրբ երանեցեալ հօրէն եւ Զեր Իստանպօլու պալիօզէն: Զոր նոքա հաւանեալ այսմ բանիս՝ ապաւինեցան ի յԱստուած եւ ի Սուրբ ժողովն ձեր: Եւ մտաք ի նաւ ի սեպտեմբերի Ի [20] եւ հասաք հոկտեմբերի Թ [9] ի Փիսգօթ կղզին: Դէպ եղեւ մեզ մեծ ղալիօն մի, անունն Պէնէմիա եւ ղաբուտանի անունն Մուշօ Ֆուռօնիայ, որ էր ազգաւ ֆրանցէս, քաղաքաւ Թուլունիա, սանճաղն Մալթա, նաւն ֆրանցէս թագաւորին եւ Բ [2] ֆրիաթա ընդ նմա: Եւ ըմբռնեալ զմեզ եւ զնաւն մեր եւ տարեալ զմեզ ի Ստամբալիա կղզին եւ Բ [2] օր անդ արգելեաց եւ զկնի Բ [2] աւուրն տարեալ զմեզ ի Նէօ կղզին եւ անդ մերկացուցեալ զմեզ՝ արար մերկ ի մօրէ. զոր ցոյց ետու նմա զփաթենթայն կարտինար Ցիպօին, առեալ առաջի շանն ճարկ եւ զպալիոզի գիրն մանրեալ կտոր կտոր արար եւ ձգեաց ի ծովն եւ ասաց, թէ՝ ես այսօր զքեզ կու մերկացնեմ, վաղն դուք գնացէք առ փափն գանկատ: Զոր եւ արար իսկ զամենեսեան մերկ ի մօրէ եւ զիս զանարժանս ինքնին ձեռամբ իւրով մերկացոյց եւ էառ յինէն զԲ [2] մատալեան եւ զսուրբ նշանս, զոր ունէի առ իս, եւ էլմաս քարով մատանի մի, որ էր գինն Ճ [100] եւ Կ [60] ղուռուշ եւ ԳԾ [300] եալտզ ոսկի եւ ոսկի մատանի մի այլ ԻԴ [24] ղուռուշի եւ զգաւազանս եպիսկոպոսական զգեստովս, ընդ ամէնն ՌԳԾ [1300] ղուռուշի ապրանք էառ յինէն: Բայց զայս զարմանամ, զի թէ Համբերէի արթշնամոյն նախատեալ էր, հաւատաւոր իմ, ի հաւատս դեօք, իսկ սա հաւատաւոր իմ, ի հաւատս դեօք, իսկ սա հաւատաւոր իմ, ի հաւատս ուղղափառութեանս եւ ծանօթ իմ ափօստոլութեան, արար զիս ծաղր եւ նախատինք ի մէջ ազգաց Հայոց, զոր ամենայն օր կու մեռանեմ ի տրտմութենէս եւ իմ պարծիլս եւ կաթոլիկէ լինելս ո՞ւր մնաց, կամ որո՞վ պարծիմ, կամ որո՞վ սոցա

© National Library of Armenia

1929, էջ 430-431: Նոյն տարիներին Էգէյեան ծովում ծովահէնների գործողութիւնների մասին տե՛ս նաեւ A collection of original voyages, containing: ...IV. Mr. Roberts adventures among the corsairs of the Levant (1692): his account of their way of living; description of the Archipelago Islands, taking of Scio, &c. Published by Capt. William Hacke. London, 1699.

7 Բնագիրը տե՛ս ASV, Vescovi, 73, f. 144r. Փաստաթղթի ծրարի (տես՛ նոյն տեղում, թթ. 147v) վրայ դրուած է զմռսէ կնիք հետեւեալ հասցէով՝ «Աւրհնութեամբ ժամանեցէ գիրս ի մեծն Հռոմ, ի ձեռն սուրբ Հօրն երանեցեալ փափին տեառն մեծի փոխանորդին Յիսուսի»: Փաստաթղթի լատիներէն 11 կէտից բաղկացած համառօտութիւն-թարգմանութիւնը, արուած հռոմաքնակ Բարսեղ Բարսեղեան կոստանդնուպոլսեցու ձեռքով, տե՛ս նոյն տեղում, թթ. 143rv+148r: Նոյն այս Բարսեղն է, որ յիշատակւում է ստորեւ տպագրուող երրորդ փաստաթղթում:

8 Մուշօ, Մուսօ. ֆրանս.՝ *monsieur* - պարոն:

9 Փիսկոթ (միջնադարեան քարտէզներում՝ Piscopia) մտնում է Սպորադեան կղզիների մէջ, Հռոդոս կղզուց հիւսիս արեւմուտ , ներկայումս կոչւում է Դիլոս:

10 Չենք բացառում, որ ուխտաւորների այս խմբի մէջ էր եղել նաեւ Երեմիա չէլէպի Քեօմիւրճեանի Գրիգորիս որդին: Էջմիածին՝ իր որդու հետեւից ուղեւորուող Երեմիա Քեօմիւրճեանին Գրիգորիսը 1687 թ. գրում էր.

Ղուրսանայ դիպեալ ի ճանապարհիս,
Թալնեցին զամէնն զինչ որ կայր ընդ իս.
Մնացաք տառապեալ խիղճ 'ւ ողորմելիս,
Դարձաք տխրութեամբ զՍպարթ քաղաքիս:

(տե՛ս Հ. Ն. *վրդ. Ակինեան*, Երեմիա չէլէպի Քէօմիւրճեան: Կեանքն ու գրական գործունէութիւնը, Վիեննա, 1939, էջ 54)

11 Իտ.՝ patènte, արտօնագիր:

12 Կարդինալ:

13 Պալիօզ էր կոչւում Օսմանեան կայսրութիւնում (մասնաւորապէս՝ Կ. Պոլսում) Վենետիկեան Հանրապետութեան դեսպանը (տե՛ս *Carlo Coco–Flora Manzonetto*, Baili Veneziani alla Sublima Porta. Storia e caratteristiche dell'ambasciata veneta a Constantinopoli. Venezia, [1985]):

14 Իտ.՝ indulgènza, ներողամտութիւն, ներողութիւն, մեղքերի քաւութիւն:

15 Տե՛ս ծանօթութիւն 4:

16 Իտ.՝ medaglióne, մեդալիոն, այս դէպքում՝ մեծ մեդալ պապի պատկերով, ինչպիսին պարբերաբար թողարկւում էր պապերի կողմից:

17 Այս դէպքում՝ առաքելական միսիոներ:

18 Ստամփալիա (միջնադարեան քարտէզներում Stampalie), Էգէյեան ծովի հարաւում, ներկայումս՝ Աստրոպալիա:

19 Fregàta՝ կրկնայարկ մարտանաւ:

20 Այժմ՝ Նիէսոս - Էգէյեան ծովի հարաւային մասում՝ Սանտորինի կղզուց հիւսիս:

21 Բնագիրը տե՛ս ASV, Vescovi, 73, f. 145r. Փաստաթուղթը հասցէագրուած է «Աւրհնութեամբ ժամանեսցէ գիրս ի մեծն Հռոմ, ի ձեռն կարդինար Յիպօհին»: Ծրարը տե՛ս նոյն տեղում, թերթ 146v:

22 Իտ.՝ galeóne, Միջերկրական ծովում կորսարների կողմից լայնօրէն օգտագործուող թնդանօթաձիգ առագաստանաւ:

23 Բնագիրը տե՛ս AP, SOCG, VOL. 500, ff. 211r:

24 Իտ.՝ patròno, հովանաւոր, պաշտպան:

25 Իտ.՝ brigantino, ֆրանս. brigantine, միջերկրծովեան երկկայմ աստատականաւ:

26 Օրթախ (օրթագ) - ընկերովի, ընկերութեամբ:

27 Այսօր Santorini կղզին, Էգեյեան ծովի հարաւային մասում:

28 Առեւտրանաւի տեսակ:

29 Փրօթօսինջիլո (պրոտոսինկելոս) - եկեղեցական պաշտօն՝ օգնական-եպիսկոպոս:

30 Իտ.՝ vicàrio, փոխանորդ, տեղապահ, աթոռակալ:

31 Հիւպատոս:

32 Կազմակերպուած խումբ, յաճախ՝ յանցախումբ:

33 Մատեանում գրեցին: Հաւատապփիւռի դիւանում այս մատեանը չյաջողուեց գտնել:

34 Այս մասին մանրամասն տե՛ս *Յ. Անասեան*, նշ. աշխ., էջ 260-267:

35 Բնագիրը տե՛ս AP, SC Armeni, Vol. 3, f. 501r: Փաստաթուղթը հասցէագրուած է՝ «Աւրհնութեամբ ժամանեսցէ գիրս ի մեծն Հռոմ, ի ձեռն կարտինարաց Սուրբ ժողով» (f. 504):





Կորսարների երթուղին Էգէյեան ծովում Guil. Delisle, Carte de la Grece ou Turquie d'Europe (Paris, 1800) քարտէզի հիմքի վրայ

© National Library of Armenia



Յովհաննէս արքեպիսկոպոսի նամակը կարդինալ Չիպոլին



Այս յօդուածը լոյս տեսած էր արդէն «Հանդէս ամսօրեայի» 1997 թուին մէջ: Նկատի առնելով, սակայն, այնտեղ կրած խանգարումը՝ նոյնը այս թուին մէջ կրկին կը հրատարակենք:

ՀԱ-ի խմբագրութիւն

# ՏԻԵՊՈԼՈՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՍՏԵԼԼԱ ՎԱՐԴԱՆԵԱՆ

*Անզննելի են Տիրոջ ճանապարհները…*

*1996 թուականի ուշ աշնանը ճակատագրի բերումով եւ անտիկ բժշկութեան յայտնի մասնագէտ պրոֆեսոր Գունդոլֆ Քայլի հրաւէրով ես բախտ ունեցայ այցելելու հինաւուրց գերմանական Վիւրցբուրգ քաղաքը, որպէսզի աւարտեմ դեղագիտութեան պատմութեան հարցերին նուիրուած իմ հետազօտութիւնները: Այստեղ Եւրոպայի հնագոյն կաճառներից մէկի՝ Վիւրցբուրգի համալսարանի բժշկապատմութեան ինստիտուտում, որը շնորհիւ իր ղեկավար պրոֆեսոր Գունդոլֆ Քայլի հսկայական գիտելիքների, կազմակերպչական տաղանդի եւ մարդկային անսահման հմայքի դարձել էր խոշոր համաշխարհային գիտական կենտրոն, որի մթնոլորտը ինչ-որ բանով յիշեցնում էր անտիկ Ալեքսանդրիան եւ նրա Մուզէոնը: Ես հոգեկան բերկրանքով սուզւում էի հին մատեանների կախարդական աշխարհը՝ հնադարեան թանկարժէք գանձեր, որոնցով իրաւացիօրէն պարծենում էր ինստիտուտի հարուստ գրադարանը: Ինձ համար անչափ հետաքրքրական էր մտովի հետեւել, ինչպէս մարդկային հանճարը քաղաքակրթութեան տարբեր օջախներում, որոնք ժամանակի եւ Տարածութեան առումով միմեանցից խիստ հեռու էին կանգնած, դեղաբոյսերի ուսումնասիրութեան բնագաւառում յաճախ նոյն ճանապարհով է ընթացել: Սիրտս հպարտութեամբ էր լցւում, երբ տեսնում էի, որ մենք՝ հայերս, շատ հարցերում պարտական լինելով անտիկ աշխարհին, դարձանք մեր հերթին մի իւրօրինակ մշակութային կամուրջ Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ, եւ որ Մաշտոցի անուան Մատենադարանի հնագոյն բժշկարաններում եւ դեղագիտարաններում պահպանուած գիտելիքները դեղաբոյսերի վերաբերեալ դարեր անց փոխանցուել էին միջնադարեան Եւրոպային:*

*Գիտական պրպտումներից ազատ ժամերին ես մեծ հետաքրքրութեամբ ծանօթանում էի այդ հին բաւարական քաղաքի տեսարժան վայրերի հետ, որը ընդհուպ մինչեւ 1802 թ. եղել է Ֆրանկոնիայի աշխարհիկ կառավարիչների՝ եպիսկոպոսների նստավայրը: Ինձ բախտ վիճակուեց տեսնել ուշ բարոկոյի ճարտարապետութեան հրաշքներից մէկը՝ Վիւրցբուրգի եպիսկոպոսական պալատը կամ ռեզիդենցիան, որը 1720-1753 թթ. կառուցել էր գերմանացի հանճարեղ ճարտարապետ Բալտազար Նեյմանը (13, էջ 3. 15, էջ 43-57): Եպիսկոպոսական պալատը զարդարուած է վենետիկցի հռչակաւոր նկարիչ Ջիովաննի Բատիստա Տիեպոլոյի (1696-1770) որմնանկարներով, որի ծննդեան երեք հարիւրամեակը ամբողջ քաղաքակիրթ աշխարհը տօնում էր 1996 թուականին (15): Հէնց այդ յոբելեանական օրերին, երբ ամէն ինչ շուրջս կարծես խօսում էր մեծ վարպետի ստեղծագործական սխրանքի մասին, ինձ վերջապէս յաջողուեց ոտք դնել եպիսկոպոս Կարլ Ֆիլիպ ֆոն Գրայֆենկլաուի (1690-1754) նստավայրը, որի օրօք աւարտուել էր պալատի շինարարութիւնը, եւ որի նախաձեռնութեամբ Տիեպոլոն հրաւի-*

© National Library of Armenia